*Նուիրատուութիւնը այն հասցէին որ տրուած է կոչին մէջ ։*

# ԿՈՉ

## ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ.

### *Ի նպաստ Թիւրքական Հայաստանի տառապեալ հայերի*

Վերջին ժամանակներս Թիւրքական Հայաստանի ամեն կողմերում տիրում է սարսափելի կացութիւն, որ առաջ է եկել հունձքի պակասութիւնից, բնական աղէտներից, ինչպէս են երկրաշարժը, հրդեհը եւ այլն, եւ ընդհանրապէս երկրի տնտեսական վերին աստիճանի աննպաստ պայմաններից ։

Ամենայն Հայոց հանգուցեալ Կաթողիկոս Խրիմեան Հայրիկը, ի նկատի ունենալով Թիւրքական Հայաստանի հայ ժողովրդի այդ ողբալի դրութիւնը, միջնորդութիւն էր յարուցել Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի մօտ, որպէսզի թոյլատրվի ընդհանուր հանգանակութիւն բանալ ի նպաստ Թիւրքական Հայաստանի մեր սովեալ եւ բազմակարօտ եղբայրների ։ Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկով 1907 թ. հոկտ. 17 թւակիր եւ No 22311 իր գրութեամբ յայտնել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, որ ներքին եւ արտաքին գործերի մինիստրների համաձայնութեամբ արտօնում է հանգանակութիւն այս նպատակով եւ հաստատում է հանգուցեալ Կաթողիկոսի կողմից առաջարկված Հանգանակիչ Մասնաժողովը, որ գտնվում է Թիֆլիսում (այս Մասնաժողովը ընտրվեց եւ հաստատվեց կաթողիկոսական կոնդակով այս տարվայ մայիսին) եւ բաղկացած է հետեւեալ անձերից — պ. պ. Առաքելեան Համբարձում, Արասխանեան Աւետիք, Արղութեան իշխանուհի Սոֆիա, Կափլեան Գաբրիէլ, Ջաւէն Տիգրան, Մարտիրոսեան տիկին Հայկանոյշ, Մելիք-Ազարեան Ալեքսանդր, Յարութիւնեան Սամսոն, Սարուխանեան Առաքել, Ստեփանեան բժիշկ Կարապետ, Վերմիշեան Քրիստափոր եւ Քալանթար Ալեքսանդր ։

Հանգանակիչ Մասնաժողովն ընտրել է իր դիւանը, այն է — Ալեքսանդր Մելիք-Ազարեան՝ նախագահ, Սամսոն Յարութիւնեան՝ փոխ-նախագահ, Առաքել Սարուխանեան՝ գանձապահ եւ Համբարձում Առաքելեան՝ քարտուղար։

Հանգանակիչ Մասնաժողովն այժմ, սկսելով իր գործունէութիւնը, դիմում է հայ հասարակութեան բոլոր խաւերին եւ կոչ է անում չը զլանալ իր նպաստները՝ Թիւրքական Հայաստանի բազմակերպ աղէտներից տառապող եւ կարօտութեան վերջին ծայրը հասած հայ ժողովրդին։

Մասնաժողովի բոլոր անդամներն ընդունում են իրանց մօտ նուիրաբերութիւններ։ Օտար քաղաքներից նուէրներ կարելի է ուղարկել Մասնաժողովի գանձապահի անունով, որի հասցէն է՝ Tiflis, Société Mantacheff & Cie. A. Saroukhan.

Ստացված նուիրատուութիւնների եւ Թիւրքական Հայաստան ուղարկված դրամական նպաստների մասին պարբերաբար հաշիւ կը ներկայացվի հասարակութեան՝ լրագրութեան միջոցով ։

*— Ռուսահայ ծանօթ գրագէտ եւ հրապարակագիր Լէօի քառասնըհինգամեայ գործունէութեան յոբելեանը տօնելու համար յառաջիկայ ապրիլին, Թիֆլիսի մէջ կազմուած է յանձնաժողով մը՝ նախագահութեամբ Ա. Ահարոնեանի։ Կոչը զոր այդ յանձնաժողովը կ'ուղղէ հայ հասարակութեան, կը յիշատակէ ոչ միայն Լէօի բազմաջան գործունէութիւնը որով հայ գրականութեան երկայն տարիներէ ի վեր ծառայութիւն մատուցած է իր հմտալից երկասիրութիւններով, այլ եւ անոր առողջական ցաւալի կացութիւնը եւ նիւթական անապահով վիճակը, եւ կը հրաւիրէ գրականութեան բարեկամները նուիրատուութիւններով մասնակցիլ այս յոբելեանական տօնին եւ «հնարաւորութիւն տալ յոգնաջան յոբելեարին նիւթական հոգսերից ազատ՝ այսուհետեւ եւս շարունակել իր այնքան բեղմնաւոր, այնքան հանրաշահ աշխատութիւնը հայ մտքի ասպարիզում ։»*

*Կը յուսանք որ հայ հասարակութիւնը պիտի գիտնայ արժանաւորապէս պատասխանել այս կոչին ։*

*Նամակ, հեռագիր եւ նուէր ուղարկել Յանձնաժողովի քարտուղար Գ. Յ. Քոչարեանին ։*


*Մէկ քանի օրէն լոյս կը տեսնէ*

Ա. ՉՕՊԱՆԵԱՆ

**ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ**

**1889—1907**

*Արշալոյս. — Ժամերուն կարաւանը. — Անձկութիւն. — Տեսիլներ. — Գիշերին մէջ. — Բլուրին վրայ.*

**Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ**

*Գին 5 ֆրանք*

*Այս հատորը տպուեցաւ՝ նիւթական աջակցութեամբ Պ. Դաւիթ Աւան-Իւզբաշեանցի ։*

*Առանձին գրքոյկի ձեւով լոյս տեսաւ*

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

**ՋԱՐԴԸ**

(1895—1896)

**Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ**

*Գին 50 սանթիմ*


Le Gérant : FRÉDÉRIC MACLER.
Imp. D. Doghramadjian
18, Rue des Gobelins, Paris.

digitised by A.R.A.R.@